

ԳՐԱԿԱՆ ԵՐԵՒՈՅԹՆԵՐ

Ռուրիկն Բնրքերնամ. Հայոց նորագոյն բանաստեղծները. Մասն I. Բանաստեղծ-մտածող (կրիտիկական անալիզ):—Կ. Կոստանճանց. Գրիգորիս աղթամարցին եւ իւր տաղերը. Յակոբւած Աղէքսանդրի պատմութեան կաճանքը:—Պ. Մոնոնան. Տիգրանի կալանաւորը (Հոգեբանական էտիզ):—Յ. Յաղոյնան. Բանաստեղծութիւններ. Աղգային կրթարան-Որբանոց ի Կիպրոս (Տեղեկագիր Բ. տարեշրջանի). Ս. Ա. Ենչ է կարգում ժողովուրդը. Ս. Գ. Յ. Պասսանճան. Une nouvelle inscription byzantine—Une nouvelle inscription arméniaque ou vannique.

Հարուստ չէ հայ գրական հրապարակը. նա երբէք էլ մեծ հարստութեամբ չէ փայլել, բայց վերջին ժամանակներս աղքատութիւնն աւելի ևս նկատելի է, դրա պատճառը ոչ թէ գրողների սակաւութիւնը կամ անպլուզաբերութիւնն է, այլ ընթերցողների նուազումը. Սա մի տխուր երևոյթ է և արժէ դրա մասին խորհել և այդ ցաւին դարման տանել, սակայն մեզ կլանող անտարբերութիւնը սպառնում է ոչ միայն այդ ցաւը մոռացման մատնելու, այլ նաև ուրիշ շատ շատերը:

Հանդիսիս նպատակներից մէկն էլ գրական երևոյթների մասին հաշիւ տալն է, ուստի թող զարմանք չը պատճառէ, որ մենք այս համարատուութեան մէջ այսքան բազմազան հրատարակութիւններ ենք միացրել, որոնք իրանց բովանդակութեամբ և ծաւալով, բայց առաւել ևս իրենց արժէքով տարբեր են. Աղքատիկ տնտեսութեան մէջ ամէն մի չնչին իր ևս տիրոջ աչքում միութիւն է կադմում, վերջապէս, այդ մանր երևոյթներն իսկ ժամանակի արտայայտիչ են, որ այնքան ամուլ է մեզ համար:

Ըստ երևութիւն լինչ դժգոհութեան առիթ ունենք. ահա մի նոր բանաստեղծ (Յակոբեան), որ իւր երգերի փունջն է մատուցանում մեզ, ահա և բանաստեղծների քննադատը, որ կրիտիկական անալիզներ (քննադատական վեր-

լուծութիւններ) է հրատարակում և մեզ ծանօթացնում մտածող բանաստեղծների հետ, ահա և փոշինների տակ թաղուած հիւն բանաստեղծներին յարութիւն տուողը (Գ. Գոստանեանց) և նրանց տաղերի վերաստուգողը, ինչո՞ւ գոհ չը լինենք և մեր հին կեանքի հոգեբանական պատկերներ նկարողից (Մոճուեան), ժողովրդի ընթերցանութեան բարդ խնդիրը քննողից և նախահայկեան չըջանի լեզուն (վանական սեպագրերի) մեկնողից (Պատմաճեան) և Կիպրոսում նոր կեանքի սերմեր ցանտոնելից:

Ներսէմն ուրեմն, ներսէմն հայցեմ փութով ընթերցողներից, որ մի վայրկեան յխալեցրի նրանց, հայկական գրական հրապարակն աղքատ անուանելով:

Սակայն այդպէս է իրօք:

Թող չը խաբեն մեզ վերնագիրները. տեսնենք ի՞նչ կայ այդ փայլուն ծածկոյթների տակ:

Դարձեալ մխրթարութիւնը հնարիցն է. պ. Գոստանեանցի այս Դ. պրակը միջնադարեան հայ բանաստեղծութեանց, մի գեղեցիկ յաւելուած է նախկին երեքի վըրայ. Գրիգոր Աղթամարցին միջնադարեան բանաստեղծների մէջ յետինը չէ թէ իւր աւելնով և թէ արդիւնաւորութիւնով: Այս հրատարակութիւնն երեք մասիցն է բաղկացած, առաջաբանը նուիրուած է Գրիգոր Աղթամարցու կեանքին, բանաստեղծութեան վերլուծմանն ու տաղերի ձեւազերիին, երկրորդ բաժնում հրատարակուած են այս վեհափառ բանաստեղծի տաղերը, թուով 14 հատ, յաւելուածը բաղկացած է Աղէքսանդր Մակեդոնացու պատմութեան կաֆաներից: Գրիգոր Աղթամարցու կաթողիկոսութեան ծննդեան և մահուան տարիքը յայտնի չեն մեզ, նրա տաղերից մի քանիսը թուակիր են (ահա այդ տարեթուերն 1515, 1519, 1523 և 1569), որոնցից եզրակացնում ենք որ նա ապրել է ԺՋ դարու մինչև երրորդ բառորոք: Այս կաթողիկոս երգչի կեանքի պարա-

գաներից մեղ ոչինչ յայտնի չէ, զարմանք է պատուում մեղ, տեսնելով՝ թէ լինչբան կենսունակութեան և կեանքի սէր ունի այս անձն, որ ապրում էր Հայաստանի թշուառաւազոյն դարերից մէկում, երբ տաճկաց և պարսից պատերազմների պատճառով ամայացաւ երկիրը, որի վերջնական աւերումն տեղի ունեցաւ Մեծ Հահաբլասի ձեռքով 1605 թուին։ Այս ժամանակի իբրեւ արտայայտութիւն մի երկտող ենք գտնում Աղթամարցու ոտանաւորների մէջ.

«Հագարացիք օրինօք թիւր

«Ջազգս խանձնն որպէս զհուր»

Սակայն Գրիգորիսի երգերից գեղեցկագոյնն է անշուշտ այն տաղը, որի մէջ բանաստեղծն արտայայտում է ասլրելութեան կոթիւնը.

«Յամէն առաւօտ և լոյս»

Պիւլպիւլն էր նստեր այգւոյս,

Քաղցրիկ ձայներ վրա դարձոյս՝

Կ'ասեն թ'արե'կ ն'լ այգւոյս:

«Քարեր եմ բերեր գետերուս,

Փռւշ եմ բերեր սարերոյս,

Յանկ եմ շիներ այս այգւոյս,

Կ'ասեն թ'արե'կ ն'լ այգւոյս,

Չեմ նշներ նս այս այգւոյս,

Այս իմ նորատունկ այգւոյս,

Յայս ուրախարար տեղւոյս՝

Եւ այս նորաշէն տներոյս:

Տասնեօթ տնից բաղկացած (տարբեր ձեռագրերի մէջ 20 տնից) այս ոտանաւորը մի քողոք է մահուան դէմ. լինչպէս հրեւում է ձեռագրների օրինակներից և երգի յաճախ արտագրութիւնից, դա սիրուած հին երգերիցն էր և երկար ժամանակ ժողովրդի բերանում կենդանի է մնացել:

Գրիգորիսը ժողովրդական սիրուած երգիչներից մէկն

է, նրա այլ տաղերն ևս երկար ժամանակ կենդանի են մնացել և սիրուած եղել, ինչպէս օրինակ «Տաղ գարնան» կոչուածը.

«Գարունն երեկ պուլպուլն աչիւն,
Ծաղկունք ամէն շատըն արին,
Եւ մուշտուլուն տարան վարդին,
Թ' երբ կ'ուգայ բո սրբելին».

Հրատարակութեանս մէջ առաջին տաղը մի վիպական եղերերգութիւն է, ուր բանաստեղծը նկարագրել է Վարդի և Գիւլպիլի անջատումն ու սէրը. այս նկարագրի մէջ գեղեցիկ ու սրտառուչ տողեր շատ կան.

Տառնակեցերոյդ դարում պարսկական բանաստեղծութիւնը տարածուած էր ամբողջ առաջաւոր Ասիայում, նրա ազդեցութիւնը նկատելի է ամենուրեք, իսկ հայկական բանաստեղծութիւնը հետևող է նրան ստրկօրէն թէ բովանդակութեամբ և թէ ձևերով ու բառերով իսկ, ահա թէ ինչո՞ւ Աղթամարցու երգերի մէջ ամբողջ տողեր և տներ կան պարսկերէն և սակաւ անգամ տաճկերէն. Այս հետևողութեան շնորհիւ իսկ զարգացան *կաֆսնեքը* կամ վիպական ոտանաւոր հատուածները. Չահնամէի նըման որևէ բանաստեղծութիւն ունենալու համար հայ երգիչներն սկսան Աղէքսանդր Մակեդոնացու պատմութեան հայերէն թարգմանութիւնը կրճատել և տեղ տեղ ոտանաւորի վերածել, այս գործին մասնակցել է և Աղթամարցին, որի գլխածէկաֆաները կազմում են հրատարակութեանս յաւելուածը. Ամէն մի երգի վերջը կցուած են այլազան ընթերցուածներ և օտար բառերի բացատրութիւններ, որոնք նպաստում են տաղերի միտքն ըմբռնելու և օտար ազդեցութեան չափը որոշելուն. Յոսանք որ պ. Կոստանեանցը կանգ չի առնիլ Աղթամարցուց յետոյ և մեզ կը տայ այլ բազմաթիւ հայ բանաստեղծների տաղերի ժողովածուք, որոնց մէջ բանաստեղծական,

սլատմական լեզուագիտական և ժողովրդագրական շատ նիւթ կայ:

Եթէ պ. Կոստանեանցը մեզ ծանօթացրել է մի հին հայ բանաստեղծի և նորա զգացմանց բանաստեղծութեան հետ, պ. Ռ. Բերբերեանը ճգնել է մեզ ծանօթացնել մի նորագոյն մաածող բանաստեղծի, սակայն ինչքան տարբերութիւն հայեացքների և ինչ մեծ վիհ բանաստեղծութեան ըմբռնման մէջ: Եթէ պ. Կոստանեանցի տեսակէտը քիչ հնացած և կեղծ դասական անուանենք, պ. Բերբերեանինը ժամանակից առաջ, դեռ գոյութիւն չունեցող պիտի համարենք: Պ. Բերբերեանը կարծում է, որ մտքի ամեն մի արտադրութիւն, ամեն մի ընագիտական, ընկերավարական տեսութիւն և իրականութիւն, որ գըրուած է չափով, բանաստեղծութիւն է: Սակայն թող ինքը խօսէ, չը նայելով մեր տեղի անձկութեան, այս տեղ առաջ պիտի բերենք պ. Բերբերեանի կարծիքների ամփոփումը, որ ինչքան յիշում ենք, դեռ երբեք ոչ մի լեզուով և ոչ մի գրականութեան մէջ արտայայտուած չեն բանաստեղծութեան մասին հետեւեալ կարծիքները:

«Նա (Լեռնեցը) զգացում է և իր զգացմունքը հոգեբանօրէն պարզում է. նա խորհում է և ահա աշխատում է իր խորհածը, մտածածը (sic!) ապացուցանել մեզ քերելով օրինակ էօլիւցիայի օրէնքը. իր ցանկութիւններին կամ ուզածներին նա որոնում է հիմք եւ ընտանի պատճառներ:»

Բայց, պ. Բերբերեան, դա բանաստեղծութիւն չէ, խորհածն ապացուցանում է գիտնականը, հրապարակախօսը, ճարտասանը, ով կամենաք, սիրտը երբ զգացմունք է բզխում, ապացոյց չէ հարցնում: Երբ բանաստեղծը հիմք է որոնում իւր ցանկութիւններին, նա հոգեբանութիւն է, գրում:

«Հայ բանաստեղծի (Լեռնեցի) գրուածքում մենք

տեսնում ենք նախ և առաջ մի բանաստեղծ— ինտելլիգէնտ 19-րդ դարու վերջին. յետոյ մտածող, փիլիսոփայ, տեղ տեղ հրապարակահաս ու մարտիչ։»

Ե՞րբ են սկսել հրապարակասուններին բանաստեղծ համարել և ո՞ւր, Ահա թէ ինչու համար ասացինք, թէ պ. Բերբերեանը ժամանակից առաջ է իւր կարծիքներով։

«Ամբողջ ժամանակ նա զբաղուած է գաղափարով, նա նրանցից չէ, որոնց համար *իդէան*, չենք ասում տենդենցիան, բանաստեղծութեան մէջ երկրորդական տեղ է բռնում։

Բայց պ. Բերբերեան, դուք շփոթում էք *իդէան* և տենդենցիան, բանաստեղծութիւնը պէտք է իդէա ունենայ, իսկ երբ տենդենցիա ունեցաւ, արդէն զրկւում է իւր հրապուրից և դառնում է քարոզ։

«Դուք ամէն մի ոտանաւորում տեսնում էք, որ բանաստեղծ-փիլիսոփան ընդունակ է աւելի *խորհելու*, քան թէ հարուստ ֆանտազիայով սաւառնելու, իսկ տեղ-տեղ նա ուղղակի գերադասում է միտքը այն աստիճան, որ գեղարուեստականը կորչում է։

Այստեղ պէտք էր իսկապէս վերջակէտ դնել, քննադատը, որ իւր գովաբանած բանաստեղծի մասին խոստովանում է՝ թէ նա երևակայութեան թռիչք չ'ունի, թէ նրա երգերի մէջ գեղարուեստը կորչում է, նա արդէն դատապարտում է իւր գոված բանաստեղծին։ 2րդ նայելով սրան ես ընթերցողներին չեմ կամենում զրկել պ. Բերբերեանի կրիտիսական գոհարներից և առաջ եմ բերում մի քանի խօսք ես այս զարմանալի քննադատունից։

«Փիլիսոփայութիւնը նրա մօտ (философія у него) կարծես սպանում է տեղ. տեղ նրա ոգևորութիւնը ("), նրա զգացումը (")», և իբրև բնական հետևանք այս բո-

լորին լինում է այն, որ նա աւելի խորհում է, քան թէ
զդոււմ (էլ ուր մնաց բանաստեղծը)...

Կարծեմ թէ բաւական է այսչափս:

Պ. Բերբերեանի տարօրինակ կարծիքներից մէկն էլ
այն է, որ նա իւր բանաստեղծին և ընթերցողներին բա-
ժանող անջրպետներիցն է համարում «բանաստեղծի
ծանր ոճը, հարուստ լեզուն, խոր իմաստը, *անգոյն*
աւտաքինը և ոլորածոյ բանահիւսու[թիւնը]: Լեռնացի
լեզուն հարուստ է լուում պ. Բերբերեանին այն պատ-
ճառով, որ ինքը հայերէն ամենևին չը գիտէ, բերածս
օրինակներն ևս հերիք են այդ վաստն հաստատելու հա-
մար, իսկ ինչ վերաբերում է Լեռնացի բանաստեղծու-
թեան անգոյն արտարինին և խորիմաստութեան, այդ
ստոյգ է վկայում պ. քննադատը: Լեռնացի լեզուի սխալ-
ները բռնել ճգնելով պ. Բերբերեանը *գեղ* բառը սխալ
գործածուած է համարում, խորհուրդ կը տայինք քիչ
հայերէն սովորել, ապա թէ ոչ ռուսերէն չը գիտեցող-
ները կարող չեն լինիլ հասկանալ յարգելի բննադատի
ապագայ երկերը:

Կարծեմ թէ բաւականաչափ ճաշակ տուի այս քն-
նադատութեան մասին, որի ամբողջութեան հետ ծանո-
թանալ ցանկացողին խորհուրդ եմ տալիս անձամբ կար-
դալու պ. Բերբերեանի գրածներն համոզուելու համար,
թէ ինչքան բանաստեղծական է Դարուինի թէօրիան բա-
ցատրող ոտանաւորը:

Ոչ մտածող փիլիսոփայ է և ոչ հարուստ երևակա-
յութեամբ վտռ բանաստեղծ պ. Յակոբեանը, որի երգե-
րի առաջին փունջը մի շատ թոյլ փորձ է. այդպիսի բա-
նաստեղծութիւններ ամէն մի դարոցական աշակերտ գը-
րել է, բայց դրանց ամէնի վախճանն ևս մոռացութիւն է
եղել կամ շատ շատ ընկերական նեղ շրջանը, ուր կար-
դացուելուց յետոյ զգրողներում կողպուելու են դատա-

պարտուել դրանք: Աւելի յաջող են Յակոբեանի թարգմանութիւնները:

Ստեփաննոս ինչ ասենք պ. Մոնոպեանին, որ իւր «Տիգրանի կալանաւորը» նոյնպէս փոխանակ գորոցում և նեղ բարեկամական շրջանում պահելու, նոյնպէս ընդհանրութեան սեփականութիւն է դարձրել: Հեղինակը կոչում է այս «հոգեբանական է էտիլդ», աւելի ճիշտ կը լինէր «Նիլ-չէի պարաֆրազ» կոչել: Ոտանաւորը տեղ տեղ սահուն է, ստեփաննոս ընդհանրապէս շատ աւելի յանգագրութիւն է: Արդեօք ինչո՞ւ պ. Մոնոպեանը *յանցանք* բառը միշտ *յան-ծանք* է գրում, միթէ այդ էլ «լիցենցիա պոէտիկա» է:

Այս ամենից յետոյ մի փոքրիկ տետրակի անծանօթ հեղինակ հարցնում է «Ինչ է կարդում ժողովուրդը և ինչպէս է վերաբերում նա դէպի ուսումնարանը և գիրքը»: Այս մի ծրագիր է տեղեկութիւններ հաւաքելու համար, որպէս զի դրանց վրայ հիմնուած պատասխան տրուի վերևի հարցումներին: Թէ ինչպէս է մեր ժողովուրդը վերաբերում դէպի ուսումնարանն ու գիրքը, մենք այդ շատ լաւ գիտենք, դրա համար ծրագրի կարիք չունինք, այդ հարցին պատասխանել են մեր բանաստեղծներն ու հրապարակախօսները, վերջապէս և մեր վերջին յիսնամեայ պատմութիւնը: Թէ ինչ է կարդում ժողովուրդը, այդ յիշաւի որ չը գիտենք և դժուար թէ այս ծրագրով իմանանք, ամէն ժողովուրդ իւր սեփական կեանքն ունի, ուստի այս թարգմանական ծրագիրը մեզ չի յարմարում:

Երբ հասանք ժողովրդին, մի երկու խօսք ևս ասենք Կիպրոս կղզում հայ ժողովրդի որբերի համար հիմնուած որբանոցի մասին, որի երկրորդ տարեշրջանի տեղագիրն ունինք առջևներս: Այս ձեռնարկութիւնը մի շատ գովելի գործ է, ափսոս միայն որ շատ չափաւոր և աղքատիկ է: Ինչ ասնպէս է թւում, որ կըր-

Թարան որբանոցի հիմնադրի մտքից արժէր օգտուել անհամար հայ որբերի ապագան ապահովելու համար:

Հայ բանառէրներից պ. Պասմաճեան, խմբագիր գիտական «Բանասէր» եռամսեայ հանդիսի, ուղարկել է «Լուսնային» երկու փոքրիկ ծանօթութիւններ ֆրանսերէն լեզուով, մինը վերաբերում է մի խոյակի արձանագրութեան, որի վրայ պ. Պասմաճեան Թէոդորոս անունն է կարգում, ուստի եղրակացնում է թէ Գ. Պօլսի մէհտէր-խանէն կամ կենդրոնական բանտը, ուր գտնուում է այդ արձանագրութիւն կրող քարը, չինուած է Թէոդոս կայսեր ամփիթէատրոնի տեղում: Զատ ափսոս որ ապագայում չեն իմանալ, թէ հրտեղ է եղել մէհտէրխանէն չինուած, որովհետեւ այնտեղ նահատակուած քրիստոնէից արեան հետքերը չեն մնալ:

Պ. Պասմաճեանի երկրորդ ծանօթութիւնը վերաբերում է մի բեկառագիր արձանագրութեան, որ գտել է գեր. Մեսրոպ Արքեպիսկոպոսը: Այդ արձանագրութիւնը տըպուած է «Արարատ»-ի 1896 թ. նոյեմբերի համարում: Պարոն Պասմաճեանը այս արձանագրութիւնը թարգմանում է այսպէս. «Մենուասի որդի Արգիստիսը չինեց այս տունը իւր ցեղի համար»: Ընթերցանութեան մէջ բացի յատուկ անուններից բոլոր միւս բառերն ենթագրութեամբ են կարդացուած և թարգմանուած:

Մենք առանձնապէս շնորհապարտ ենք պ. Պասմաճեանին, որ նա մեր աղքատիկ գրականութեան մէջ զբաղւում է գրական այդ դեռ ևս անյայտ աշխարհով, թէպէտ և այստեղ բեկառագիտութեան մասին կարող ենք կրկնել այն, որ Վովթերը իւր ժամանակի լեզուագիտութեան մասին է ասել. «Լեզուագիտութիւնը մի այնպիսի գիտութիւն է, որի մէջ ձայնաւորները նշանակութիւն չունին ամենին, իսկ բաղաձայները գրանցից աւելի քիչ նշանակութիւն ունին»:

Ն. Գ.